# ՋՐԱԳ JRAK

ԾԽԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ PARISH NEWS


## MESSAGE OF FAITH

*"The secret things belong to the Lord Our God, but the things revealed belong to us and to our children forever."*

*- Deuteronomy 29:29 -*

*Our Lord leads us step by step through our life. There are some secrets God has chosen not to reveal to us. When we try to figure out the future , it is a form of worry, doubting His promises to care for us. We do not have the capacity to know everything He does. He has told us enough through His Word for our faith and to serve Him. Relax and enjoy the journey in His presence, trusting Him to open up the way. Our future is a secret.*



### The Coffee service on the lawn

was rather special on Sunday 29 May as students from the AGBU Alexander Primary school came along and helped out.





### ACYA Q&A Session - May 19

Our youth group had an informal Q&A session where many questions were put to Serpazan Hayr about religion, the traditions of the Armenian church and youth participation and involvement in church life.

**THANK YOU FOR YOUR DONATIONS**



PLEASE CONTINUE DONATING FOR ARTSAKH

### Artsakh Appeal

The Diocese of Australia transferred 14,000USD this month to the Mother See of Holy Etchmiadzin to help families and soldiers affected by the recent conflict. The generosity of our faithful parishioners made possible the following Church contributions; Holy Resurrection $13,825, Holy Trinity $3,577, St Mary's Melbourne $2,000.

### Update on Armenian Refugee Intake

Advocacy and consultations continue to be led by the Armenian Apostolic Church with Mr and Mrs Sarkis and Zepur Mouradian at the forefront, organising and attending meetings with the Minister and officials of the Department of Immigration and Border Protection (DIBP) raising concerns on the continuing refugee-humanitarian crisis in the Middle East, the afflictions on ethnic and religious minorities and particularly the impact on the Armenians in the region. Information from the DIBP indicates some sixty visas have been granted over the past two months with arrivals recently starting in Sydney, Perth and Melbourne. More than 400 applications are in progress at different stages either waiting for consideration, interviews or outcomes.

## COMING UP

**MARRIAGE : CHANGING THE DEFINITION AND ITS CONSEQUENCES**

Presentation by the Hon. Greg Donnelly, MLC

Friday 17 June at 7.00pm , Edgarian Hall

**VARTAVAR - TRANSFIGURATION**

Sunday 3 July

Come and join us for a big morning tea and water festivities after the Badarak on the lawns



### Hambardzoom - Feast of Pentecost

On Thursday 5 May an Episcopal Divine Liturgy was celebrated by His Grace Bishop Haigazoun Najarian on the actual feast day and this will become an annual tradition at our parish.



### ACLA NEWS

The Armenian Church Ladies Auxiliary organised a fun bus trip to Kiama on 16 April. Everyone enjoyed a great time visiting the famous blow-hole and the Nan Tien Temple on a beautiful autumn day.

On 30 May, the Annual General Meeting of the ACLA was held in the Edgarian hall when a new committee was elected for 2016-17.

**Հունիսի 11, 2016թ.**

Սբ. Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը

Սբ. Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը հայոց մեծագույն սրբերից մեկի հիշատակին նվիրված երեք տոներից մեկն է: Ըստ ավանդության՝ հայոց մեծ դարձից հետո Սբ. Գրիգոր Լուսավորիչն իր կյանքի վերջին տարիներն ավարտում է ճգնակեցությամբ՝ Սեպուհ լեռան Մանեի այրում, որտեղ էլ վախճանվում է 326 թվականին: Նրա մարմինը գտնում են հովիվները, որոնք, չճանաչելով մահացած կաթողիկոսին, մարմինը ծածկում են քարակույտի տակ: Հետագայում Սբ. Գրիգոր Լուսավորիչը տեսիլքով հայտնում է իր նշխարների տեղն աշակերտներից Գառնիկ Բասենցուն, որից հետո Հայրապետի նշխարները տեղափոխվում եւ ամփոփվում են Դարանաղի գավառի Թորդան գյուղում: Սբ. Գրիգոր Լուսավորչի նշխարները բոլոր քրիստոնեական եկեղեցիների ամենամեծ սրբություններից են: Հայոց Հայրապետի նշխարները գտնվելուց հետո նրանցից մի մասը իբրեւ սրբազան մասունք տարվել է Վաղարշապատ, Բյուզանդիա, Իտալիա: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում պահվող Լուսավորչի Սբ. Աջը Հայ եկեղեցու կարեւորագույն սրբություններից մեկն է, որով օրհնվում է սրբազան մյուռոնը: Սբ. Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի տոնը նշվում է Հոգեգալստից հետո, չորրորդ շաբաթ օրը: Տոնի օրը եկեղեցիներում մատուցվում է Սբ. Պատարագ: Տոնի առիթով Հայ եկեղեցին սահմանել է շաբաթապահք:

**Հունիսի 25, 2016թ.**

Քրիստոսի 12 առաքյալների և Սբ. Պողոս 13-րդ առաքյալի հիշատակության օր

Հիսուս Քրիստոսի ընտրած 12 առաքյալները Քրիստոսի աշակերտներն ու Քրիստոսի վարդապետության առաջին տարածողներն էին, հարուցյալ Քրիստոսի վկաները:

«Եվ նա իր մոտ կանչելով իր տասներկու աշակերտներին՝ նրանց իշխանություն տվեց պիղծ դևերի վրա՝ հանելու դրանք և բժշկելու ամեն ցավ և ամեն հիվանդություն» (Մատթ. 10:1): Պետրոս, Անդրեաս, Հակոբոս, Հովհաննես, Մատթեոս, Բարդուղիմեոս, Փիլիպոս, Թովմաս, Թադեոս, Հակոբոս (Ալփյան), Շմավոն (Կանանացի) եւ Հուդա առաքյալներն էին նրանք, որոնցից վերջինը եղավ Հիսուսի մատնիչը: Հետագայում 12 առաքյալների շարքում Հուդայի փոխարեն ընտրվեց Մատաթիա առաքյալը: Հավատարիմ Հարուցյալ Հիսուսի վերջին պատգամին, (Տես Մատթ. 28:18-19) առաքյալները Հիսուսի պատվիրանները քարոզեցին ու ուսուցանեցին տարբեր ազգերի, «մկրտեցին նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով», այսպիսով դառնալով Քրիստոսի եկեղեցու հիմնադիրները: Քրիստոսի պատվիրանների ամենամեծ քարոզիչներից է Պողոս առաքյալը, որին քրիստոնյա եկեղեցին ճանաչում է իբրև 13-րդ առաքյալ: Հայ Առաքելական Եկեղեցին 12 առաքյալների և 13-րդ առաքյալ ճանաչված Պողոս առաքյալի հիշատակը նշում է միասնաբար Վարդավառից մեկ շաբաթ առաջ:

**Հինգշաբթի 5 Մայիս**

Սրբազան Հայրը Համբարձման Սուրբ Պատարագ մատուցեց առաւօտեան ժամը 10:30-ին Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ մէջ:

**Հինգշաբթի 19 Մայիս**

Եկեղեցւոյս Երիտասարդաց Մարմինի կազմակերպութեամբ, գաղութիս երիտասարդները հանդիպում ունեցան Սրբազան Հօր հետ երեկոյեան ժամը 6-ին Էտկարեան սրահէն ներս:

**Երկուշաբթի 30 Մայիս**

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Տիկնանց Մարմինի Տարեկան ընդհանուր ժողովը գումարուեցաւ Էտկարեան սրահէն ներս երեկոյեան ժամը 7–էն սկսեալ:

16 Ապրիլ 2016 Տիկնանց Յանձնախումբը դէպի Քայամա, աշնանային պտոյտ մը կազմակերպեց, որուն մաս կազմած էին գաղութէս տիկիններ:

***Ուրբաթ 17 Յունիս***

**Պսակադրութիւնը, Փոփոխութիւնները եւ Անոնց Արդիւնքը**

կը դասախօսէ՝ Մեծայարգ Տիար Կրեկ Տօննէլլի, Էտկարեան սրահէն ներս երեկոյեան ժամը 7–ին:

***Կիրակի 3 Յուլիս***

Վարդավառ: Տօն Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան: